Andranik Margaryan
Memorial

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ 14-ՐԴ ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հայաստանի շախմատի ակադեմիան (հասցե՝ ք. Երևան, Շևչենկո 34) 2024թ. հունվարի 9-ից մինչև 16-ը կազմակերպում է Անդրանիկ Մարգարյանի 14-րդ հուշամրցաշարը, որին կարող են մասնակցել մինչև 18 տարեկան պատանիներ և աղջիկներ: Հուշամրցաշարը կանցկացվի տարբեր տարիքային խմբերով, շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով:

Հուշամրցաշարի ընդհանուր մրցանակային ֆոնդը կազմում է **2 350 000 ՀՀ դրամ**: Մրցաշարերում 1-3-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցները կպարգևատրվեն մեդալներով և պատվոգրերով:

Մրցաշար Ա1 /մինչև 18տ. պատանիներ և աղջիկներ/

1-ին տեղ	200 000
2-րդ տեղ	170 000
3-րդ տեղ	150 000
4-րդ տեղ	120 000
5-րդ տեղ	80 000
6-րդ տեղ	50 000
7-րդ տեղ	50 000

Մրցաշար Ա2 /մինչև 14տ. պատանիներ և աղջիկներ/

1-ին տեղ	140 000
2-րդ տեղ	110 000
3-րդ տեղ	80 000
4-րդ տեղ	60 000
5-րդ տեղ	50 000

Մրցաշար Ա3 /մինչև 12տ. պատանիներ/

1-ին տեղ	100 000
2-րդ տեղ	70 000
3-րդ տեղ	50 000
4-րդ տեղ	40 000
5-րդ տեղ	40 000

Մրցաշար Ա4 /մինչև 10տ. պատանիներ/

1-ին տեղ	80 000
2-րդ տեղ	60 000
3-րդ տեղ	50 000
4-րդ տեղ	40 000
5-րդ տեղ	30 000

Մրցաշար Ա5 /մինչև 8տ. պատանիներ/

1-ին տեղ	50 000
2-րդ տեղ	30 000
3-րդ տեղ	20 000

Մրցաշար Բ /մինչև 12տ. աղջիկներ/

1-ին տեղ	80 000
2-րդ տեղ	60 000
3-րդ տեղ	50 000
4-րդ տեղ	35 000
5-րդ տեղ	30 000

Հատուկ մրցանակներ

Մինչև 18տ. աղջիկ	40 000
Մինչև 16տ. աղջիկ	30 000
Մինչև 14տ. աղջիկ	30 000
Մինչև 10տ. Աղջիկ – 1 տեղ	25 000
Մինչև 10տ. Աղջիկ – 2 տեղ	20 000
Մինչև 8տ. Աղջիկ – 1 տեղ	20 000
Մինչև 8տ. Աղջիկ – 2 տեղ	10 000

Հատուկ մրցանակներ է սահմանել մեր գործընկեր "ChessMood" ընկերությունը բոլոր մրցանակային տեղերի համար՝ 3 000 ԱՄՆ դոլարին համարժեք բաժանորդագրություն www.chessmood.com կայքում:

Հավասար միավորներ վաստակելու դեպքում բոլոր մրցաշարերում մրցանակները չեն կիսվում, իսկ տեղերը կորոշվեն. հատված Բուհգոլցով, այնուհետև Բուհգոլցով և սև գույնով խաղացած պարտիաների քանակով: Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ստանալու միայն մեկ մրցանակ:

Մրցաշարերում իրավունք ունեն մասնակցելու այն շախմատիստները, ովքեր ունեն.
Ա1 մրցաշար՝ ազգային վարկանիշ (աղջիկներ և մարզերից մասնակիցներ՝ առնվազն I կարգ)
Ա2 մրցաշար՝ առնվազն I կարգ
Ա3 մրցաշար՝ առնվազն II կարգ
Ա4 մրցաշար՝ առնվազն III կարգ (մարզերի համար՝ IV կարգ)
Ա5 մրցաշար՝ առնվազն IV կարգ
Բ մրցաշար՝ 2012թ.՝ առնվազն II կարգ,
2013թ.՝ առնվազն III կարգ,
2014թ.՝ առնվազն IV կարգ:
Ա1 և Ա2 մրցաշարերում կհաշվարկվի ազգային և միջազգային (ՖԻԴԵ) վարկանիշ: Ա1 և Ա2 մրցաշարերի մասնակիցները պարտադիր պետք է ունենան **ՖԻԴԵ-ի նույնականացման համար /FIDE ID/:**
ՖԻԴԵ-ի նույնականացման համար չունենալու դեպքում մինչև դեկտեմբերի 23-ը դիմեք Հայաստանի շախմատի ֆեդերացիա կամ այցելեք հետևյալ հղումով՝ https://chessfed.am/am/fide-registration-form :
Ա3, Ա4 և Բ մրցաշարերում կհաշվարկվի ազգային վարկանիշ:

*Մրցաշարի կազմակերպիչը կարող է թույլատրել սահմանափակ քանակով պատանի շախմատիստների մասնակցությունը մրցաշարերին:

Ժ Ա Մ Ա Կ Ա Ր Գ
90 րոպե մինչև խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով:

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

Ամսաթիվ	Տուր	Ժամ
9 հունվարի	I	15:00
10 հունվարի	II	15:00
11 հունվարի	III	15:00
12 հունվարի	IV	15:00
13 հունվարի	V	10:30
13 հունվարի	VI	16:30
14 հունվարի	VII	15:00
15 հունվարի	VIII	15:00
16 հունվարի	IX	11:00
16 հունվարի	Փակման արարողություն	16:00

Խաղից ուշանալու թույլատրելի ժամանակը սահմանվում է **30 րոպե**:

Մ ՈՒ Տ Ք Ա Վ Ճ Ա Ր
մինչև դեկտեմբերի 23-ը՝ ժամը 18:00-ն,

- Ա1 և Ա2 մրցաշարեր – **8000 ՀՀ դրամ** (**Ա1 մրցաշարում** 2000-ից ցածր ազգային վարկանիշ ունեցող շախմատիստների մուտքավճարը սահմանված է **10000 ՀՀ դրամ**),
- Ա3, Ա4, Ա5 և Բ մրցաշարեր – **6000 ՀՀ դրամ**

մինչև դեկտեմբերի 30-ը՝ ժամը 18:00-ն,

- Ա1 և Ա2 մրցաշարեր – **10000 ՀՀ դրամ** (**Ա1 մրցաշարում** 2000-ից ցածր ազգային վարկանիշ ունեցող շախմատիստների մուտքավճարը սահմանված է **12000 ՀՀ դրամ**),
- Ա3, Ա4, Ա5 և Բ մրցաշարեր – **8000 ՀՀ դրամ**

<u>ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ</u>

մինչև 2024 թվականի հունվարի 5-ը՝ ժամը 18:00-ն,

- Ա1 և Ա2 մրցաշարեր – **20000 ՀՀ դրամ** (**Ա1 մրցաշարում** 2000-ից ցածր ազգային վարկանիշ ունեցող շախմատիստների մուտքավճարը սահմանված է **22000 ՀՀ դրամ**),
- Ա3, Ա4, Ա5 և Բ մրցաշարեր – **16000 ՀՀ դրամ**

<u>ԳՐԱՆՑՈՒՄ</u>

Մասնակիցների գրանցումն կատարվում է օնլայն տարբերակով: Մրցաշարի պաշտոնական կայքէջում անհրաժեշտ է սեղմել **ԳՐԱՆՑՎԵԼ** կոճակին, լրացնել բոլոր դաշտերը և կատարել վճարումը: Բանկային քարտի բացակայության դեպքում մասնակցության վճարները կարող եք փոխանցել Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամի հետևյալ հաշվեհամարին՝

Շահառու՝ Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/հ՝ 1570018417800100
ՀՎՀՀ՝ 02560522

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել **մասնակցի անունը և ազգանունը, հեռախոսահամար, կարգ/վարկանիշ, Անդրանիկ Մարգարյանի հուշամրցաշարի մասնակցության վճար, տարիքային խումբ, մարզիչ**:

<u>ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ</u>

***Մասնակիցների և մարզիչների բոլոր ծախսերը հոգում է գործուղող կազմակերպությունը:**
***Միայն Հայաստանի շախմատի ակադեմիայի սաների համար.**

- բոլոր սաների համար մուտքավճարները կզեղչվեն 20%-ով,
- Հայաստանի պատանիների և աղջիկների առաջնության եզրափակիչ մրցաշարին մասնակցած սաների համար մուտքավճարները կզեղչվեն 50%-ով,
- Հայաստանի պատանիների և աղջիկների առաջնությունում 1-3-րդ տեղեր զբաղեցրած սաների համար մասնակցության վճարներ չկա:

***Մուտքավճարների ետ վերադարձի դեպքում կկատարվի 20% պահում:**
***Մանրամասների համար զանգահարել 043-448473 հեռախոսահամարով:**

Մրցաշարի տնօրեն

Վարդուհի Սարգսյան